ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ
ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Կասկադ համալիր ձգվող ճանապարհահատվածը /Վերին Անտառային 19Ա հասցեից մինչև Վերին Անտառային 122 հասցե/ անվանակոչել հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ, ՀՀ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի անվամբ՝ «Գոհար Գասպարյան փողոց»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գոհար Գասպարյանը ծնվել է 1924թ.-ի դեկտեմբերի 14-ին, Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում: Երաժշտական կրթությունն ստացել է Կահիրեի Երաժշտական ակադեմիայում, ապա սովորել է Է.Ֆելդմանի և Վ.Կարրոյի մոտ: 1940-ից ելույթներ է ունեցել Կահիրեում: 1948թ. տեղափոխվել է Հայաստան: 1949թ.-ից եղել է Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատարուհի: 1964թ.-ից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Եղել է կոլորատուրային սոպրանո, ունեցել է ձայնային լայն դիապազոն (փոքր օկտավայի սոլ հնչյունից մինչև երրորդ օկտավայի լյան), անբասիր տեխնիկա, նրա ձայնը առանձնացել է ճկունությամբ, երանգների ճոխությամբ, անցումների թեթևությամբ:

Նրան հատուկ է եղել կատարվող ստեղծագործությունների գաղափարական-գեղարվեստական բովանդակության խոր դրսևորումն ու համոզիչ իմաստավորումը:

Հանդես է եկել հետևյալ օպերաներում՝ Լ.Դելիբի «Լակմե» (Լակմե 1949թ.), Ա.Տիգրանյանի «Անուշ» (Անուշ, 1950թ., 1969թ.), «Դավիթ Բեկ» (Շուշան, 1953թ.), Հ.Ստեփանյանի «Հերոսուհի» (Գոհար, 1950թ.), Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» (Ռոզինա, 1953թ.), Տ.Չուխաճյանի «Լեբլեբիջի» (Կարինե, 1951թ.), «Արշակ Երկրորդ» (Օլիմպիա, 1966թ.), Գունոյի «Ֆաուստ» (Մարգարիտ, 1958թ.), Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր» (Լյուչիա, 1964թ.), Ն.Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» (Մարֆա, 1967թ.) և այլն:

Երգչուհու համերգային երգացանկը եղել է հարուստ (Բախ, Հենդել, Մոցարտ, Շտրաուս, Գլիեր, Գրիգ, Չայկովսկի, Ռախմանինով և այլն):

Հանդես է եկել թեմատիկ համերգներով՝ իտալական վարպետներ, հայ հոգևոր երաժշտություն, Կոմիտաս, վիրտուոզային երգեր, սիրված օպերային դերերգեր՝ (Մանոնի ծիծաղը՝ Ֆ.Օբերի «Մանոն Լեսկո», Ամինա՝ Բելլինիի «Սոմնամբուլա», Դինորա՝ Մեյերբերի «Դինորա», Օֆելյայի խելագարության տեսարանը՝ Շ.Թոմայի «Համլետ», Շամախանի թագուհի՝ Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ», Տիկնիկ՝ Ժ.Օֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» և այլն):

Նշանավոր է նրա շեքսպիրյան ծրագիրը՝ կազմված Շեքսպիրի թեմաներով 19-20-րդ դարերի գրված ստեղծագործություններից:

Մասնակցել է նաև մի շարք հայկական ֆիլմերի ստեղծմանը, երգել է «Հայկական կինոհամերգ» (1954թ.), «Երգում է Գոհար Գասպարյանը» (1963թ.), «Կարինե» (1967թ.), «Անուշ» (1983թ.), «Արշակ Երկրորդ» (1988թ.) և այլ ֆիլմերում: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում, Իրանում (1962թ.), Ճապոնիայում (1958թ., 1964թ.), Եգիպտոսում (1963թ., 1973թ.), Հարավային Ամերիկայի երկրներում (1966թ., 1969թ.), ԱՄՆ-ում (1967-69թթ), Անգլիայում (1971թ.) և այլուր:

Ընտրվել է Հայաստանի Գերագույն Խորհրդի 5-րդ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 7-րդ և 8-րդ գումարումների պատգամավոր:

Նրա բազմաթիվ աշակերտներ դարձել են համաշխարհային լավագույն բեմերի մենակատարներ:

1953թ. արժանացել է Հայաստանի, 1956թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի, 1984թ.՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի և Երևանի պատվավոր քաղաքացու կոչման, 1996թ.՝ ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Մահացել է Երևանում, թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու առաջարկով են հանդես եկել նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Շ.Շահինյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Ա.Սաթյանը, ՀՀ ազգային

հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանը, մշակութային մի շարք գործիչներ և ժողովրդական արտիստներ, ինչպես նաև Գոհար Գասպարյանի դուստրը՝ Սեդա Գասպարյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարի լրանում է Գոհար Գասպարյանի 95-ամյակը, և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով՝ առաջարկում եմ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Կասկադ համալիր ձգվող ճանապարհահատվածը /Վերին Անտառային 19Ա հասցեից մինչև Վերին Անտառային 122 հասցե/ անվանակոչել հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ, ՀՀ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի անվամբ՝ «Գոհար Գասպարյան փողոց»: Այսպիսով վառ կպահվի հայ ժողովրդական երգչուհու, «Հայաստանի սոխակ» Գոհար Գասպարյանի հիշատակն ու ավանդը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ